

# ԼՐԱՏՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵՍՆ ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

## ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԵՒ ԿՈՎԿԱՍԻՑ

Արագանի նոր վեպը՝ «Ճանապարհին», — Խոյս տեսաւ Հայաստանի Առջևոնական Խորհրդարարքար Ալագանի վեպը՝ «Ճանապարհին» խորագրով։ Վրաստանի Խորհրդային Գրողների Ֆեղերացին հայկական սեկցիան, Փետր. 18ին, Թիֆլիսում, Տպագրիչների Ակումբում կազմակերպեց գրական դաս այդ վեպի մասին։

«Առողջ կենցաղ»։ — Երեւանում լոյս տեսաւ «Առողջ կենցաղ» անունով պատկերագարք հանդէս որի նպատակն է բարձրացնել արտադրական բանուրութեան եւ գիւղի աշխատաւորութեան կուլտուրառողջապահական գիտելիքները, ինչպէս եւ նոր սերունդի ֆիզիքական եւ մասային կարողութիւնները։ Նա հին ճեռնող կեանքին հակազերու է նորն ու առողջը։ «Առողջ կենցաղ»ը հանդիսանալու է Հայաստանի կուլտուրական յեղափոխութեան կարեւորագոյն գործօններից ճէկը։ Թերթի հասցէն՝ Երեւան, Սպանքարեան փողոց թիւ 27, «Առողջ կենցաղ»ի խմբագրութեան։

Ենրվանգարք։ — Հայաստանի Պետհրատը լոյս է ընծայել Ենրվանգարքի երկերի լիակատար ժողովածուն։

Դօքրիկ Սունդուկեանի «Պետօն» քուրքերէն։ — Դերասան Մկրտիչ Զանանը Գ. Սունդուկեանի «Պետօն» թարգմանէլ է թուրքերէն լեզուվ, որը առաջին անգամ խաղացել է Երեւանի պետական թատրոնում Թաղումավարի թրքակոն խմբից։

Մ. Դարբինեանի «Սատիրա» պիեսը։ — Մ. Դարբինեանը գրել է «Սատիրա» պիեսը, որ ներկայացւեց Տպագրիչների Ակումբում։ Պիեսում ցուցադրւած են Բանկօսպի արհեստական պոչերը, խորհրդային հիմնարկներում բոյն դրած բիւրոկատակիւրելու մասին։

Հայկինօն 1929—30 թվն. — Հայկինօն այս շրջանում իր ծրագրի ճէջ ձացրել է հետեւեալ նկարները։

1. «Ազդանեան ջրվէծի մօս»։ — Հայկինօնական փիլմ է, որ ցուցադրւեց Հայաստանի կինոթատրոններում։

2. «Առաջին նառագայրներ»։ — Պիոներական կեանքն է ցոլացնում։

3. «Անուշ»։ — Նիւթը վերցւած է Ցովշաննես Թումանեանի համանուն պօէմայից։ Ացենարիոյի ճշակման ժամանակ պատկերի ճէջ է ճրտցում 60ական թուականների Լոռւայ գիւղացիութիւնն իր կենցաղային նիստ ու կացով։ Այդ նպատակով օգտագործւելու են Յով. Թումանեանի ճիւսերկերը, «Լոռեցի Սաքօն», «Բախտը» եւն։ Երածըշտական նւագակցութիւնն «Անուշ»ի պատկերների համար յանձնուած է երածշտագէտ Սպիրիտոն Մելիքեանին, իսկ որպէս նկարիչ հրաւիրւած է Մ. Սարեւանը, որը պէտք է պատրաստի դեկորացիաները եւ կոստիւմները բնորոշ հայկական ոճով։

4. «Անտանի»։ — Արշալոյս Տէր-Յովնանի սղենարիսն։ Նկարը պատկերելու է ճանր բուրժուական միջավայրի ազգեցութեան տակ կոմմոնիստանեսավարի այլասերելլը եւ դրան հակալիշու զործարանային բանւորների ակտիւ ճասնակցութիւնը սոցիալիստական ճրցակցութեան ճէջ։

5. — «Կիկոս»։ — Նիւթը վերցւած է Համանուն վեպից։ Նիւթը՝ քաղաքացիական պատերազմը Հայաստանում եւ հայկական զիւղի գրութիւնը Դաշնակցականների օրով։ Պատկերը ճշակում է որպագիկու հիկական բնոյթով։ Գլխաւոր գերի կատարումը յանձնում է գերասան Խաչանեանին։

6. «Եռը եւ Եռուորը բիւրոկրատիզմի բարեմամ»։ — Կոճիկական ժապաւէն, որը պատկերե-

լու է խորհրդային ապարատի գտումը եւ պետական պում եւ քաղաքակոծում նստած ու ճեր զիւղական քաղաքականութիւնն ազաւաղող բիւրոկրատներին վերաբերող ճռճնաներ:

7. «Քաղաքագետներ Մեխիկայից».—Նկարի ճէջ ծաղրւում է Դաշնակցականների պետական սիստեմը, ճանաւրապէս զուանայի տակ պարող նրանց «գեմոկրատական պարլամէնտը»: Սցենարիօն՝ Ե. Զուբարի:

Վերջանում են նաև հետեւեալ սցենարիօնները.

«Զանգեզուր».—Այսուեղ դաշնակցական ճի խճապեաի քաջագործութիւններն են ցոլանալու: Սցենարիօն՝ Ակսել Բակունցի:

«Ալեհանի բախտը».—Սցենարիօն՝ Գ. Զախիրեանի: Նիւթը վերցւած է կոլտնտեսութեան շինարարութիւնից:

«Փոխարինով».—Լենինականի տեքստի գործարանում կոմերիաների սոցգրակցութեան ճէջ ունեցած ճանակցութիւնն է պատկերւելու:

Բանւորական տուն».—Սցենարիօն՝ Ս. Մանուկեանի: Կինո-Սատիրա, որի ճէջ ցոյց են տըրւում բանւորական տների շինարարութեան թերութիւնները երեւանում:

«Արշալոյ».—Ցոլացնում է իր ճէջ շըջգործկոմի նախագահի պաշտօնում գեղչկուհիի առաջքաշւիլը:

«Քաջ Նազար».—Սցենարիօն՝ Ա. Տէր-Յովնանեանի: Քաղաքական պամֆլետ Դաշնակցականների դէմ:

Բաց ի սրանցից Հայկենոյի 1929—30 թւի ծրագիրը նախատեսում է բաց թողնել նաև կուլտուրական ֆիլմեր՝ «Անձեռ ոճրագործներ», «Պոլիգրափ - արդինաբերութիւն» (գիրքը ճասաների ճէջ), «Չորագիւ», «Մասսաները խաւարի դէմ» (անգրադիտութեան վերացում), «Հայաստանի լոռնային արդինաբերութիւնը», «Հայաստանի ջրային հարըստութիւնները, եւայնի:

Երեւանի պետական կօնւերվածօրիալում. — Կոմսէրվատորիայի սիժֆոնիկ օրքէստրը ղեկավարում է զիրիմէօր Բուղալեանը, իսկ երաժշտապէտ Կարօ Զաքարիսնի ղեկավարութեանը պատրաստում է քառաձայն երգեցիկ խումբ՝ 80 հողոց, որը շուտով հանդէս կը գտայ իր համերգներով:

Միհայէլ Նալբանդէանի ցուցահանդէսը. — Հայաստանի Պետական թանգարանում Միքայէլ

Նալբանդէանի ծննդեան 100ամեակի սովոր բացւեց ցուցահանդէս, ուր ցուցադրած են Նալբանդէանի նամակները, լուսանկարները, իրերը, գրքերը, ճամուռում լոյս տեսած յօդուածները, եւայնի:

Շիրվանզադէի յոբելեանը Լենինութիւնում եւ Թիֆլիսում.—Լենինականի պետական թատրոնում տանեց վիպասան-դրամատուրգ Շիրվանզադէի գրական գործունէութեան 50ամեայ յորելեանը:

Վատավակաւոր գերասանուհի Արուս Ռոկանեանի եւ բանաստեղծ Աւետիք Խաչակեանի ուղեկցութեամբ բեծ գուրս եկաւ Շիրվանզադէն եւ ողջոյնի ճառաւերից յետոյ նա խօսողներին պատասխանեց ուղեւորեալ ճառով:

Շիրվանզադէի գրական գործունէութեան 50-ամեայ յորելեանը Թիֆլիսում տօնւեց Փետր. 27ին, Առութավելու համերգային դաշիճում: Վրաստանի Լուսուղկոմ Դ. Կանդելակէն հակիրճ ճառով բնորոշեց Շիրվանզադէն որպէս Անդրկովկասեան ժողովուրդների կուլտուրական կապի ցայտոն ոիմբով: Նա կէս դար իր գրականութեամբ, ասաց Կանդելակէն, խարազանել է բուրժուական նեխւած կեանքն իր բնորոշ կողմերով: Եպա Համբուրեց Շիրվանզադէի հետ:

Շիրվանզադէի գրական ստեղծագործութեան ընդարձակ եւ բազմակողմանի վերլուծութիւնը տևեց Արտաշէս Կարինեանը: Այնուշետեւ ողջոյնի խօսքերով հանդէս եկան, Վրաստանի Գրողների Ֆեդէ. բացիայի կողմից Գ. Խոբակիձեն, Պետհամալսարանի գիտական աշխատաւորների կողմից Պրօֆ. Նուցուրիձեն, Դեղաբերէն, Պարաւեսանի գործիքների մեջաւու աշխատանկան կամացների կողմից Պարաւեսանի գործիքների մեջաւու աշխատանկան կամացների կողմից Անդրկովկասեան Կոմիտէի ներկայացուցիչ Արաշէլին (յայտնեց, որ Կոմիտէն մեծարել է Շիրվանզադէին Ան. զըրկովկասեան վաստակաւոր զեղարւեսագլաւի ախտարսով), Վրաց ակադեմիկ լրամայի կողմից դերասան Վասաձէն, Վրաստանի Գրողների մեղերացիայի հայկական սեկցիայի կողմից Մարգար, Հայակագեմիկ պետպահաճայի կողմից զերասան Երմէնեան, վերասանութիւն (իր կողմից), թուրք գրողների կողմից Ազիզավ, թուրք ակադեմիկ պետպահայի կողմից՝ Բաղերօվը, իսկ վրացի բանաստեղծ Գրելաշվիլին կարդաց յորելեարի «Նամուռ» վէպից իր թարգմանած հատածը:

Վերջում հանդէս եկաւ Շիրվանզադէն:

Թէեւ ես ֆիզիքապէս տկար եմ, — ասաց նա, — բայց հողեղէս զեռ երիտասարդ եմ եւ տես-

նելով իմ հայրենի երկրի սոցիալիստական շինարարութիւնը, է՛լ աւելի եմ սգեւորւում եւ պարսաւուրութիւնն եմ զգում շարունակել իմ դործը:

Կոմիտասի եւ Ալ. Սպենդիարիանի գործերի հրատարակութիւնը.— Երեւանի Պետրասին կից Մուղ սեկտորը տպագրում է Կոմիտասի ձայնագրած անտիպ ժողովրդական երգերի ժողովածուն. տպագրութեան է յանձնելու նաև երաժշտագէտ Ալ. Սպենդիարեանի անտիպ աշխատութիւնները:

Անիի ցուցահանդեսը.— Երեւանի հայ պետքանգարանը էրծիտամի եւ նիւթական կուլտուրայի պատմութեան Ակադեմիայի հետ միասին, Լենինգրադում կազմակերպում է Անիի ցուցահանդէսը: Բացի թանգարանի տրամադրած էքսպոնատներից, որոնք կազմում են զգալի տոկոսը Անիի իրերի, ցուցադրւելու է նաև էրծիտամում գտնուող Անիի ժողովածուն: Վերջիններից արժեքաւոր են մանաւանդ որմանկարների երեք բեկորները: Բացի այն խոշոր նշանակութիւնից, որպիսին ներկայացնում են Անիի նիւթերը, նրանց ցուցադրումը էրծիտամում գտնուող նոյն կուլտուրայի իրերի համարութեամբ (կաւելէ ամաններ պարսկական թէա եւ վերաբին քաղաքատեղիներում կատարած պեղութերից, 12րդ դար, ինչպէս եւ նոյնանձան եղիպատական, Սպանօ-Մաքրիտանական բժնորեան արեւստի իրերի) ներկայացնում է յատուկ շահէկանութիւն եւ հնարաւորութիւն է տալիս պարզաբանելու Անիի կուլտուրայի հետ կտաւած մի շարք դիտական պլրոբէմներ:

Ցուցահանդէսը կազմակերպելու գործում ճառնակ ցութիւն ունին ակադեմիկ Մարրը եւ պլոփ. Օրբէլին:

«Փարոսդանը».— Թիֆլիսի Պետրասը լոյսընծայեց Մ. Դարբինեանի նոր գիրքը — «Փարոսապան»:

«Պարոկահալ նորագոյն առուղներ».— Լոյս տեսաւ գրականագէտ-բանասէր Արամ Երեմեանի «Պարսկահայ նորագոյն աշուուներ» նոր գիրքը, որ պարունակում է իր ծէջ հետեւեալ աշուուները: — Միսկին Մաթեոս, աշուղ Ալլահիլլի, Մարտիրոս Մանուկեան եւ Միսկին Ստեփան: Գիրքը, որ բաղկացած է 120 էջից, զարդարուած է աշուղ Ալլահիլլի նկարով եւ ձեռագրի նմուշով: Գիրքն ունի նաև մի բառարան՝ օտար եւ անհասկանալի բառերի համար: Սահանալու համար դիմել՝ «Handes

Amsorya» VI ½ Mechitharistengasse  
Vienne (Autriche): Գինն է 2 ֆրանք:

«Օտար Մարդը».— Լոյս տեսաւ Երեւանի Պետրասի կողմէից շնորհալի պղողետ զրոյ Գեղաճ Մարեանի «Օտար Մարդը» վէպիկը:

Փանոս Թէրեմեկեանի ցուցահանդէսը: — Թիֆլիսի Հայարտան զաշկիձում բացւեց նկարիչ Փանոս Թէրեմէղեանի նկարների ցուցահանդէսը, ուր ցուցադրւած են պէյզաժ, պորտրէտ, մանր, նատիւր մորտ, եւայլն: Նկարներից աչքի են ընկնում՝ «Պատերազմի արհաւիրքներ», «Գորիսի հեքէնաթային անտառանման ժայռեր», «Միջնադարեան պէյզաժ», «Ըլվէդացի արձանագործը», «Նիազարյալի ընթացքը», եւայլն:

«Երգիր Խորհրդային».— Լոյս տեսաւ «Երգիր Խորհրդային» նորագոյն պօեզիայի ընտիր նմուշների ժողովածուն, որ կազմում է «Պրոլետար»ի յաւելուածը: Նիւթեր ունին՝ Յակոբ Յակոբեան, Եղիշէ Զարենց, Ազատ Վշտունի, Ալաղան, Մկրտիչ Արմեն, Ալ. Վարդանեան, Արով, Ն. Զարեան եւ ուրիշներ:

Արտզու «Աչքը վախիցած Հանեսը»: — Վրաստանի Պրոլետ-Գրողների Ասոցիացիայի հայկական սէկցիան Կաշեգործների Ակումբում, ճարտի 23ին, կազմակերպեց զրական դատ ուղեկից զրոյ Արագու «Աչքը վախիցած Հանես»ի շուրջը:

Հայ առուղների երեկոյթներ: — Յայտնի երգիչ Շարա-Տալեանը կազմակերպում է մի շարք երեկոյթներ նւիրւած հայ աշուղներին (Սայեթնովա, աշուղ Զիւանի, նիրին, եւայլն): Մինչեւ օրս երեկոյթ-համերգներ կազմակերպել է Երեւանում, թիֆլիսում, Բագրեւում եւ ամէն տեղ դաել է շերճ ընդունելութիւն: Այժմ Շարա-Տալեանի անւաճը էլ Լենինականում սկսել է տալ իր երեկոները: Դրանով երգիչը վառ է պահում ժողովրդի մէջ աշուղական երգեց:

Նար-Դոսի «Սպանւած Աղաւնի»ն: — Վրաստանի Խորհրդի Գրողների Ֆեղերացիայի հայկական սէկցիան Մարտի 20ին, Տպագրիչների ակումբում կազմակերպեց զրական դատ Նար-Դոսի «Սպանւած Աղաւնի» վէպի շուրջը, որ մեծ հետաքրքրութիւն առաջ բերեց:

Մարտիրոս Մագմանեանի «Նանի»ն: — Վրաստանի Պետրասը հրատարակեց երիտասարդ երա-

Ժիշտ Մարտիրոս Մազմանեանի «Նանի» ձեռերգը, ՄԵՐ ԵՐԱԺՇՏԱԳԵՏՆԵՐԸ  
դաշնամուրի նւագակցութեածը, հայերէն եւ թուր-  
քերէն տէքստով:

«Հոկտեմբեր». — Լոյս տեսաւ Վրաստանի  
պլողետո-գրողների հայկ. սէկցիայի «Հոկտեմբեր»  
դրական գեղարուեատական ժողովածուն (3 զիրք),  
ուր արժէքաւոր նիւթեր ունին Յակոր Յակոբեան,  
Երազի, Մ. Դարբինեան, Հոկտեմբեր, Պօղոսեան, Մ.  
Պետրոսեան, Պայտղատ, Ռուբէն Շղարաբ եւ ու-  
րիշներ:

Մեր գերասան դերասանուհիները. — Երե-  
րեւանում են գտնուում ճեր յայտնի դերասան-դերա-  
սանուհիներից՝ Սրուս Ռոկանեան, Յասմիկ, Օլգա  
Գուլագեան, Յովհաննէս Յըրէլեան, Միքայէլ Մա-  
նուկեան, Յովհաննէս Ստեփանեան, Գրիգոր Աւետ-  
եան, Մկրտիչ Ջանան, Հրաչեայ Ներսիսեան, Աւետ  
Աւետիսեան, Խաչնեան եւ ուրիշներ:

Թիֆլիսում. — Տէր-Դաւթեան, Վարդուհի,  
Մայուրեան, Ալիխանեան, Արմէնեան Արմէն, Ար-  
մէնեան Դուրեան, Բերոյեան, Մամիկոնեան, Աղայ-  
եան (այժմ քաջւած է բեմից) եւ ուրիշներ:

### ՄԵՐ ԳՐՈՂՆԵՐԸ

Երեւանում ապրուում են Հետեւեալ արժէքաւոր  
գրողները. — Ստեփան Զօրեան, Դերենիկ Դեմիք-  
եան, Միք. Մանուկելեան, Վահան Միքայեան, Ա-  
լազան, Ազատ Վշտունի, Ե. Զարենց, Ակսել Բա-  
կոնց, Մկրտիչ Արմէն, Անուշաւան Վարդանեան,  
Նայիրի Զարեան, Գևորգ Յըրով, Մարգիս Մելիքսէթ-  
եան, Անուշ, Արաքս, Յովհ. Մալխասեան, Կոստ.  
Մելիք-Շահնազարեան, Լեռ-Կամսար, եւալլն:

Թիֆլիսում են գտնուում. — Յրազի, Ազատ  
Վարդանեան, Մատաթ Պետրոսեան, Մարգար Աւե-  
տիսեան, Մերոն Թորգոմեան, Նար Դոս, Յակոբ  
Յակոբեան, Շիրվանզարէ, Վէսուկէր, Մատ. Դարբին-  
եան, Գ. Մելոեան եւալլն:

Լենինականում. — Գեղամ Մարեան, Ռոբատ:  
Դիլիջանում. — Վ. Նորենց:

Մեր երաժշտագէտները յրւած են զանազան  
քաղաքներում. ընդհանուր պատկերն է Հետեւ-  
եալը. —

Երեւանում են ապրուում Ռոմանոս Մելիքեան,  
Անուշաւան Տէր-Դեւոնդեան, Սպիրիտոն Մելիքեան,  
Ռվաննեան Տէր. Գրիգորեան, Կարո Զաքարեան եւ  
Միքայէլ Միքոյեան:

Թիֆլիսում են կեղրոնացել Երմէն Տիգրանեան,  
Սարգիս Բարխուդարեան, Արշակ Աղամեան, Ազատ  
Մանուկեան եւ ու. Տալեան:

Բագու. — Անտոն Մայլիեան:

Դանիակ. — Գորգէն Միքոյեան:

Լենինգրատ. — Քրիստ. Քուշնարեան եւ Յարօ  
Մատիսիսեան:

Մոսկով. — Մուշեղ Աղայեան եւ Ա. Խաչա-  
տրեան:

### ՄԵՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԸ

Երեւանում աշխատուում են Հետեւեալ ճարտա-  
րապետները. —

Ակադեմիկոս Թամանեան, Ն. Բունիաթեան, Ա-  
շարոնեան Ա., Ավանէսեան Ա., Ասոյեան Մ., Հա-  
լաթեան Կ., Յակոբեան Ո., Մազմանեան Մ., Մե-  
լիք-Մարտիրոսեան Ա., Մարգարեան Ով., Մաֆար-  
եան Ա., Քոչար Գ. եւ ուրիշներ:

Թ. Դ. Ա. Կ. Յ

### Վ. Բ Ի Պ Ա Կ Ի Յ

Անահիս թիւ 5. — Պ. Կ. Յ. Բասմաջեանի  
յօդուածին ճէջ, էջ 121, Ա. սիւնակ, տող 12, «Եւ-  
րոպական»ը կարգալ՝ նայերեն: Իսկ Բ. սիւնակ,  
տող 20, «Խոց մի եղինէւն ետք աւելցուր՝ որ  
զմիսն ուտէ, եւ մեծ եարա լինի: Նոյնպէս, նոյն  
սիւնակ, տող 3, «ուտող»ը կարգալ՝ ուտուող:

Անահիս, նոյն թիւ. — Թլկուրանցի ծաղ ի վե-  
րայ գատաստանի. — Պ. Քիւրեանի ունեցած ձե-  
ռագիլը 1684ին գրուած է եւ ոչ թէ 1881ին: Տող  
9, գունիսէ, ուղղել՝ գունիք: